№ 107 ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20 **1890** ՀԻՆԳՇԱԲԹԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 20 № 107

ՏԱՍՆ ԵՒ ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 րուբլի, կէս տարւանը 6 րուբ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրւում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ. Редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ.

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեգործ և ուսանող. Վեներական ախտեր. Նամակ Հին-Նախիջեւանից. Նամակ Եկատերինօդարից. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մխիթարեան միաբանութիւնը. Լուրեր Կ. Պոլսից. Թիւրքիա. Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ԲՕՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Երեւանեան նահանգում.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԲԱՐԵԳՈՐԾ ԵՒ ՈՒՍԱՆՈՂ

Մեր լրագրութիւնը միշտ աշխատում է հայ բարեգործների ուշադրութիւնը դարձնել ի միջի այլոց և դէպի չքաւոր հայ ուսանողները: Սրա դէմ մենք ոչինչ չունենք ասելու: Բայց այդ խնդիրը մի ուրիշ կողմն էլ ունի, որի վրա կամենում ենք մատնացոյց անել:

Անվիճելի ճշմարտութիւն է, որ մի ժողովուրդ դէպի առաջ մղելու համար անհրաժեշտ է ունենալ այնպիսի առաջնորդներ, որոնք հիմնովին պատրաստւած լինէին իրանց կոչման համար: Եթէ մի հասարակութիւն կամենում է ունենալ եկեղեցի, դպրոց, մամուլ, թատրօն.... նա պէտք անպատճառ ունենայ և հիմնաւոր պատրաստութիւն ունեցող հոգևորականներ, մանկավարժներ, գրողներ, դերասաններ, որոնք ոչ միայն պէտք սիրեն և նուիրված լինեն իրանց կոչմանը, այլ և պէտք է տիրապետեն նրան, պէտք է գործի իսկական տէրը լինեն:

Մենք հեռու ենք այն սխալ գաղափարից, թէ լաւ գրող, կամ մանկավարժ, կամ հոգևորական դառնալ բացառապէս կարող են այնպիսի անձնաւորութիւններ, որոնք բարձրագոյն կրթութիւն են ստացել: Կեանքը մեզ ցոյց է տալիս, որ յիշեալ գործերի մէջ կարողանում են օգտաւէտ լինել և այնպիսիները, որոնք կամ միջնակարգ կրթութիւն ունեն, կամ նրանից էլ զուրկ լինելով ինքնակրթութեամբ են առաջացել: Եթէ, օրինակ, մեր այժմեան գրականական ասպարիզից հեռանան բարձրագոյն դպրոցի երեսը չը տեսած գրողները, այն ժամանակ յիշեալ ասպարէզը կը նմանի Սահարայի անապատին, որտեղ միայն քանի մի օազիսներ կը մնան: Մեր դպրոցներում և այլ ասպարէզներում նոյնպէս հազուագիւտ են բարձրագոյն կրթութիւն ունեցողները, բայց և այնպէս շատ անգամ գտնում ենք այնպիսի ուսուցիչներ, որոնք չը նայելով իրանց սահմանափակ կրթութեան, միայն շնորհիւ անձնուիրութեան, ինքնակրթութեան և փորձառութեան մեծ փայլ են ցոյց տալիս դպրոցական ասպարիզի վրա: Այդ բոլորը չէ կարելի ուրանալ:

Բայց երբ աւելի խորը նայելու լինենք մեր հասարակական գործերի սկզբնական ծագման և պատմական ընթացքի վրա, կը գտնենք որ գործի սկիզբը դնողները կամ նրա գլխաւոր ղեկավարները համարեա թէ բոլորն էլ եղել են բարձրագոյն կրթութիւն ունեցող երիտասարդներ: Ճշմարիտ է՝ մենք ունեցանք մէկ Րաֆֆի, որը թէև բարձրագոյն ուսում չունէր, սակայն կարողացաւ իր վիպական գրուածներով մեծ գործ կատարել: Բայց Րաֆֆիի նմանները, որպէս բնական տաղանդներ, բացառիկ երևոյթներ են. միւս կողմից չէ՞ որ Րաֆֆին զարգացնում էր իր տաղանդը՝ շփվելով բարձրագոյն կրթութիւն ունեցողների հետ: Եւ չէ՞ որ Րաֆֆին կրկնապատիկ աւելի պայծառ կը փայլէր, եթէ իր տաղանդը ենթարկած լինէր գիտութեան կենսատու ազդեցութեանը:

Կարճ ասած. թէև հասարակական ասպարէզում կարող են դեր ունենալ և ունենում են նոյնպէս բարձրագոյն կրթութիւն չունեցող անձնաւորութիւնները, այնու ամենայնիւ ոչ մի հասարակական ասպարէզ չէ կարելի հաստատ հիմունքի վրա դրված համարել, եթէ նրան չեն մասնակցում այնպիսի անձնաւորութիւններ, որոնք յատկապէս պատրաստված են հասարակական գործունէութեան համար: Օրինակ, որ և է գիրք կարող է քննադատել և մի միջնակարգ կրթութիւն ունեցողը. նա կարող է շատ առողջ դատողութիւններ տալ, բայց հաստատ քննադատ լինելու համար հարկաւոր է հիմնաւորապէս ուսումնասիրած լինել զանազան գրականական ուղղութիւններ, ծանօթ լինել բազմաթիւ գիտութիւնների հետ, զարգացած էսթէտիքական ճաշակ ունենալ և այլն: Հասարակական գործերի հաստատութեան համար անհրաժեշտ է ունենալ կանոնաւորապէս պատրաստված գործիչներ:

Նայելով այժմ մեր հասարակական գործերին, տեսնում ենք, որ նրանք հաստատ գործիչների մեծ պակասութիւն ունեն: Պահանջն օրից օր աճում է, բայց համապատասխան արտադրողները քիչ են: Հունձը շատ է, մշակները քիչ... Ընթերցանութեան սէրը զարգացել է հասարակութեան մէջ, բայց գրքեր չը կան: Հասարակական խնդիրները օրից օր բազմանում և բարդանում են, բայց նրանց լուծել աշխատող քչերը կան:

Ինչի՞ց է առաջանում այդ երևոյթը: Մի քանի պատճառներ կան, բայց գլխաւոր պատճառներից մէկն այն է, որ հայ ուսանողը չէ կամենում պատրաստվել հասարակական ասպարէզ մտնելու համար: Ամենքն էլ կամենում են տեխնիկ դառնալ, ամենքն էլ հաստատ ու ապահով պաշտօնների վրա են ուղղում իրանց հայեացքը: Իսկ դպրոցը... իսկ գրականութիւնը... և շատ «իսկ»—եր: Հայ ուսանողը չէ կամենում պատրաստվել յիշեալ ասպարէզների համար: Հակառակ կերպով շատ քչերն են մտածում:

Ահա թէ ինչու մեր մասնաւոր բարեգործները և թէ բարեգործական հիմնարկութիւնները պէտք է գլխաւորապէս ձեռք մեկնեն այնպիսի ուսանողներին, որոնք երազում չեն տեսնում գեղեցիկ աներ, պճնազարդ տիկիններ, ու հլու ծառաներ, այլ տեսնում են հասարակութեան ծառայելու ձգտում, բարեկարգ դպրոցներ, գաղափարի համար գործող մշակներ և այլն:

Ի միջի այլոց պէտք է ուշադրութեան առնել և հասարակութեան համար պատրաստվել կամեցող ուսանողուհիներին: Արդէն հայ ուսանողուհին ճանապարհը բացել դէպի է բարձրագոյն դպրոցը: Եւրոպայում արդէն մի տասնեակ հայ ուսանողուհիներ կան: Հարկաւոր է միջոց տալ և չքաւոր հայ օրիորդին գիտութեան լոյսը ստանալու համար: Չքաւոր ուսանողուհին, որը կեանքի ծանրութիւնն արդէն զգացել է, աւելի լաւ կարող է ըմբռնել իր նմանների կարիքը, աւելի և աւելի լաւ գործադրել իր ոյժերը:

Ս. Թ.

### ՎԵՆԵՐԱԿԱՆ ԱԽՏԵՐ

Գաւառներից սարսափելի տեղեկութիւններ ենք ստանում: Կարդալով այդ տեղեկութիւնները մարդ շւարում, յուսահատվում է:—Գիւղերում տարածվում են վեներական ախտեր, քաղաքներից վերադարձողները իրանց հետ ընծայ են բերում իրանց գռեհիկ ծնողներին, և այդ ընծան այն սարսափելի ախտն է, որ այսօր անարգել կերպով տարածվում է մեր յետընկած գիւղերում: Էջմիածնի գաւառում, Զանգեզուրի գաւառում և ուրիշ շատ տեղերում այդ ախտը այնքան տարածվել է, որ շատ գիւղերում սովորական երևոյթների կարգն է անցել:

Այդ վտանգաւոր ախտերի տարածման գլխաւոր պատճառը հէնց այն է, որ ժողովուրդը տեղեկութիւն չունի թէ այդ ախտերը վարակիչ են և մէկից միւս մարդուն են անցնում:

Պատահել են շատ դէպքեր, երբ մի գիւղում մի վարակվածից վարակվել են 10, 20 և նոյն իսկ 30 ընտանիք մի քանի ամիսների ընթացքում: Հարևանները միմեանցից կերակուր են վերցնում, միմեանցից աման են փոխ առնում, խնջոյքների և հարսանիքների ժամանակ մի և նոյն ամանից ուտում են, մի և նոյն բաժակով գինի են խմում,—և այդպիսով զանազան վարակիչ ախտերը անարգել կերպով մի մարդուց անցնում են միւսին, մի ընտանիքից միւսին են անցնում:

Տեղական բժշկական վարչութիւնները և նրանց ներկայացուցիչ բժիշկները որ և է շօշափելի օգնութիւն չեն կարողանում ցոյց տալ, որովհետև պաշտօնական դիրք բռնող բժիշկը չէ կարողանում մտնել ժողովրդի մէջ, և վերջապէս եթէ մտնի էլ, ինչ կարող է անել մի ահագին գաւառին մի բժիշկը, քանի որ տասնեակ բժիշկներ են հարկաւոր, որոնք կարողանային մտնել ժողովրդի մէջ, խօսել նրան հասկանալի լեզուով, բացատրել այդ սարսափելի հիւանդութիւնների ինչ լինելը, և նրանից ազատ մնալու միջոցները:

Այդ բոլորը չէ կատարվում. ժողովուրդն ինքն ոչինչ չէ հասկանում. նա չը գիտէ թէ որքան վտանգաւոր և հեշտ տարածվող են վեներական ախտերը, զգուշութեան միջոցներ ձեռք չէ առնում, ոչ ոք նրան չէ նախազգուշացնում, ոչ գրքով և ոչ խօսքով, և դրա հետևանքն այն ողբալի դրութիւնն է, որի մասին մեզ ամեն կողմից գանգատվում են.—այն է վեներական ախտերի անարգել կերպով տարածվելը ռամիկ ժողովրդի մէջ:

*

### ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Սեպտեմբերի 11-ին

Շաբաթ, ամսիս 3-ին, տեղիս թատերասէրները գնալով մօտակայ Ջահուկ գիւղը, տուեցին մի ներկայացում բարեգործական նպատակով: Խաղացին «Արշակ երկրորդը» և վերջումը ցոյց տըրվեցան մի քանի կենդանի պատկերներ: Ներկայացումը բաւականին աջող անցաւ, բազմութիւնը բաւականացուցիչ էր. զուտ արդիւնք գոյացաւ մօտաւորապէս 25 րուբլի:

Առաջին անգամն էր, որ ներկայացում էր լինում Ջահուկում և շատերը չէին տեսած:

Թէ որքան հարկաւոր է թատրօնի գաղափարը արծարծել մեր գիւղերում ևս, դրա մասին շատ անգամ է գրվել: Ժամանակ է, որ մենք իրագործենք այդ միտքը և աշխատենք թատրօնի միջոցով տարածել թէ գաւառական և թէ մաս-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԵՐԵՒԱՆԵԱՆ ՆԱՀԱՆԳՈՒՄ

### IV

Ամեն մի ճանապարհորդ, որը գալիս է Երևան, պէտք է անպատճառ տեսնէ Սարդարի այգին և Հայելիների դահլիճը: Դրանք երկուսն էլ գտնվում են քաղաքից դուրս, Էջմիածնի ճանապարհի վրա. վերջինը գտնվում է հին բերդի մէջ: Ասում են, որ թէ այգին և թէ դահլիճը մի ժամանակ տեսնելու արժանի բաներ էին, բայց այժմ այնպիսի անխնամ դրութեան մէջ են գտնվում, որ իսկապէս չարժէ էլ տեսնել և մարդ զզվում ու տխրում է, տեսնելով թէ մենք որքան անընդունակ ենք պահպանել հնութիւնները: Սարդարի այգին շատ անմաքուր է պահվում, դարևոր ծառերից շատերը նրա միջից կտրվեցան և նրանց տեղը, մի ահագին տարածութեան վրա՝ բամբակ է ցանվում այժմ: Դրանով պետական կալուածների վարչութիւնը, որի իշխանութեան տակ անցել է այգին, դիտաւորութիւն ունի նահանգի բնակիչներին առաջարկել օրինակելի բամբակացանութիւնը: Այգու մէջտեղ գտնվող Սարդարի կիօսկը կատարելապէս քանդվում է և իսկապէս ներկայացնում է մի տխուր աւերակ: Նրա չորս կողմը եղած չորս հատ ֆօնտանները քանդված են, իսկ կիօսկի մէջտեղ եղած մարմարեայ ֆօնտանը հանված և յայտնի չէ թէ ուր է անհետացած....

«Հայելիների դահլիճը» նմանապէս մի տխուր աւերակ է ներկայացնում. տեղ-տեղ յատակը և կամարները քանդվում են, յատակի վրա տեղ տեղ փոսեր են գոյացել. պատուհանները հանված են.... Միայն հին պարսկական մի քանի նկարները (պարսկական թագաւորների և սարդարների բնական մեծութեամբ նկարած կենդանագիրները պատերի վրա) լաւ են պահպանվել: Գոյները այնքան թարմ են, որ կարծես պատկերները երկու օր առաջ են նկարվել: Հանված մի պատուհանից, որը մի ահագին քառակուսի ծակ է ներկայացնում, բացվում է մի հրաշալի տեսարան Հրազդան (Զանգու) գետի և հնադարեան հայկական կամուրջի վրա, որը տանում է դէպի Էջմիածնի ճանապարհը: Դահլիճը այնպիսի բարձրութեան վրա է գտնվում, որ կանգնելով այդ ահագին պատուհանի, կամ բացուածքի առջև և նայելով ներքև, յիշած հրաշալի տեսարանի վրա, մարդուս գլուխը սկսում է պտտվել: Մարդուս սիրտը ցաւում է, այո, տեսնելով թէ որքան մենք անհոգ ենք վերաբերվում դէպի հնութիւնները, դէպի պատմական յիշողութիւնները:

Գաղափար ունենալու համար թէ ինչպէս են պահվում Երևանի խաղողի այգիները ես այցելեցի Աֆրիկեանների խաղողի այգին, որը Սարդարի այգուց ոչ հեռու է գտնվում: Այդ ահագին և շատ գեղեցիկ կերպով պահված այգում կայ գինու մարան, որը փորված է ժայռի մէջ և կատարելապէս մութ է: Աֆրիկեանների մի եղբայրը, որը գինեգործութիւնը սովորել է արտասահմանում, կառավարում է կալուածքը և գինու պատրաստութեանն ու ամբողջ կալուածքին տուել է բոլոր եւրոպական, ժամանակակից ուղղութիւն: Միայն վազերի տնկելու ձևը, ի հարկէ, մնացել է տեղական: Վազերը, ինչպէս միշտ Երևանեան նահանգում, շատ կարճահասակ են, և տնկված են փոքրիկ բլուրների վրա, իսկ ձմեռ ժամանակ (քանի որ Երևանում ձմեռ ժամանակ շատ ցուրտ է լինում) վազերը պառկեցնում են բլուրի ստորոտում եղած փոս տեղում և ծածկում են հողով:

Այցելեցի և Ներսէս Թայիրեանի գինու գործարանը, որի կառավարիչ պ. Օհանեանց բարի եղաւ ինձ ամեն բան ցոյց տալու: Գինու մարանը գետնի տակ է. մոմը վառեցինք և իջանք սանդուղքները: Ահագին տակառներ դարսված են անցքերի պատերի երկայնութեամբ: Այդտեղ օդի տաքութիւնը 14 աստիճանից բարձր չէ: Պ. Օհանեանց ինձ փորձել տուեց հին գինին:

Առհասարակ գինեգործութիւնը Երևանում, իմ կարծիքով, մեծ առաջադիմութիւն է արել: Առաջվայ ժամանակներում, ինչպէս վկայում են ամենքը, Երևանի գինին գրեթէ անհնարին էր խմել, անկարելի էր գործածել ճաշի ժամանակ որպէս ամենօրեայ գործածութեան, սեղանի գինի: Նա ծանր էր, անմիջապէս հարբեցնող էր և գլուխը ցաւացնող.... Բայց այժմ այստեղի գինիները ենթարկվելով աւելի կատարելագործված պատրաստութեան, դարձել են թեթև, դուրեկան, խմվում են հեշտ կերպով ճաշի ժամանակ և իմ կարծիքով շատ շուտով աջողութեամբ կը մրցեն Կախեթի և Ելիսավետպոլի գինիների հետ: Ափսոս որ հաղորդակցութեան յարմար միջոցների բացակայութեան պատճառով, Երևանի գինիները դժուարութեամբ են վաճառահանվում նահանգից:

նաւոր գիւղական հասարակութիւնների մէջ սէր դէպի բարին և ճշմարիտը։ Ուսումնարանը և Թատրօնը պէտք է սերտ և ամուր կապերով կապել միմեանց հետ, քանի որ դրանք են, որ մի փոքր լոյս են մտցնում խաւարի մէջ։

Այգեկութը Թէ մեզանում և Թէ գիւղերում արդէն վերջացած է։ Այս տարի գաւառումս խաղողի բերքը բաւական նուազել է, այնպէս որ այն այգիտէրը, որը անցեալ տարի իր այգուց քաղել էր 500 պուդ խաղող, այս տարի հազիւ կարողացել է 200 պուդ քաղել։ Այժմ մեզանում գինու առաջին տեսակը ծախվում է պուդը (20 չիշը) 4 րուբլի, իսկ երկրորդը՝ 3 րուբլի։

Նոյնպէս և կենսական մթերքների գները այս տարի մեզանում բաւական Թանգ են, քան անցեալ տարիները, բացի մի քանի տեսակ Թաց մրգեղէններից, որոնք «Ղափանի տակ» կոչված հրապարակի վրա առաւօտեանից մինչև երեկոյ Թափված են լինում։ Բաւական էժան է, օրինակ, սեխը, որի պուդը ծախվում է 40 կոպէկ, ձմերուկը—20 կ., ամենաընտիր խնձորը, տանձը և դեղձը ֆունտը արժէ 3 կոպէկ, նաւան հատը, որի քաշը լինում է 3—5 ֆունտ, արժէ 10 կոպէկ։ Իսկ միւս կենսական անհրաժեշտ պէտքերը բաւական Թանգ են. օրինակ, ալիւրի պուդը ծախվում է 1 րուբլուց—1 ր. 20 կոպէկ, ցորենը—80 կոպէկից—1 րուբլի, հացի ֆունտը 3 կոպէկ, «բօմբի» ասված հացի առաջին տեսակի ֆունտը 5 կոպէկ, իսկ երկրորդը՝ 3 կոպէկ. գարու պուդը 50—60 կոպէկ, բրնձի պուդը 2 ր. 40 կոպէկ, ոչխարի մսի ֆունտը 6 կոպէկ, տաւարի—5½ կոպէկ, այծի 6 կոպէկ, կարագ իւղի պուդը 9 րուբլի, հալած իւղին 9—50 կոպէկ, հաւի հատը 10—15 կոպէկ, ձուն 8 հատը 5 կոպէկ։

Եղանակը մեզանում ահա երեք օր է ինչ անձրևային է և այդ պատճառով ցուրտ է լինում. ինչպէս երևում է մօտակայ սարերի գագաթները արդէն ծածկված են ձիւնով։

Ա. Տ. Մ.

## ՆԱՄԱԿ ԵԿԱՏԵՐԻՆՈԴԱՐԻՑ

—

Սեպտեմբերի 14-ին

Մի քանի մարդկանց եռանդուն գործունէութեան շնորհով տեղիս երկսեռ ուսումնարանների նորակառոյց շէնքը վերջանալու վրա է։ Թէև այս շինութեան համար ընտրված են տասը հոգաբարձուներ, սակայն կան սրանցից մի քանիսը, որոնք միայն անունով են, ոչ մի հոգս իրանց վրա չառնելով, հեռուից պիտի ասեն «и мы пахали»։ Շատ ցանկալի էր, որ վերջիններս իրանց բռնած ընթացքը շարունակէին, այսինքն ոչ մի հոգսի մէջ չը խառնվէին և Թոյլ տային աշխատաւոր մարդկանց իրանց գործը շարունակելու։ Սակայն այժմ լսվում է, որ ոչ միայն չեն աշխատում գործը առաջ տանել, այլ և ուզում են արած լաւ բանը քանդել։

Բանը հետևեալումն է.—Նորակառոյց ուսումնարանի հիմքը ձգելու օրից, վճռված է եղել, որ շէնքի ընդարձակ դահլիճում կառուցվի Թատրօնական բեմ, որպէս զի հայ Թատերասէրների խումբը, ուրեմն և հայ հասարակութիւնը, ազատվի քաղաքային Թատրօնին մեծ-մեծ վարձեր տալուց (իւրաքանչիւր ներկայացման մօտ 100 ր.)։ Այժմ շէնքը աւարտման վրա լինելով, հոգաբարձութեան ծախսարարը սկսել է և բեմի շինութիւնը, որ գովասանքի միայն արժանի է։ Բայց չէ։ Այն մարդիկ, որոնք քիչ պարտականութիւն են կատարում, իրաւունք աւելի են պահանջում։ Այժմ այսպէս են և յիշեալ ուսումնարանի շինութեան այն հոգաբարձուները, որոնք գրեթէ ոչինչ պարտականութիւն չեն կատարած, մինչև այժմ էլ դեռ չը գիտեն Թէ ուսումնարանի ինչ մասն է շինված և ինչ մասն է մնում. բայց այժմ լսելով, որ ծախսարարը, առանց այդ անգործ հոգաբարձուների գիտութեան սկսել է բեմի շինութիւնը, զարթել են և իրաւունք են պահանջում Թէ՝ ինչպէս առանց իրանց գիտութեան բեմ են շինում, Թէ բեմը իրանց հարկաւոր չէ, Թէ ուսումնարանը Թատրօն են դարձնում և այլն շատ այսպիսի դուրլթիներ, և խիստ աշխատում են, որ այդ շինած բեմը քանդեն, միայն նրա համար, որ իրանց՝ այդ անունով միայն հոգաբարձուներին, աշխատող և գործունեայ հոգաբարձուները չեն ասել, չեն ասել այն հիման վրա, որ արժանի չէ իրաւունք ունենալու այն մարդը, որը իր պարտականութիւն չէ կատարում։

Շատ լաւ կը լինէր, եթէ դրանք հանդարտ իրանց տեղը նստէին և շարունակէին իրանց անգործութիւնը. բեմ քանդելը դրանց պատիւ չէ բերում. այդ նոյնն է Թէ՝ ուսումնարանը քանդել։ Միթէ չեն հասկանում, որ բեմը քանդելով, տարեկան, հինգ—վեց հարիւր րուբլի քաղաքային Թատրօնին վարձ պիտի տան, մինչդեռ այդ վարձի մի քառորդ մասն էլ չէ ծախսվելու բեմի շինութեան վրա։ Ինչո՞ւ են ուզում այդ մարդիկ անձնական հաշիւները խառնել հասարակութեան համար կատարած օգտակար հաստատութեան մէջ և վնաս տալ։

***

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ռուսաց, իտալական և ֆրանսիական օպերաներին, որոնք գրեթէ բոլորն էլ Թոյլ են անցնում, հետևեց ֆրանսիական օպերէտը։ Երեքշաբթի, սեպտեմբերի 18-ին, ներկայացրին Լակոմի «Մադամ Բօնիֆաս» օպերէտը, որի մէջ խաղում էին Թիֆլիսցիներին լաւ ծանօթ տ. Լասալ և պ. Արլէն։ Հասարակութիւնը տ. Լասալին լաւ ընդունեց։ Տիկինը նոյնն է։ Նրա ճիշդ ֆրանսիական աշխուժութիւնը և գեղեցիկ խաղը, ինչպէս և առաջ, մոռացնել են տալիս նրա ձայնի պակասութիւնը. պ. Արլէն բաւական ծիծաղացնում էր։ Միւս դերասանները բաւական Թոյլ էին։

—

Կալուածական բանկի Թատրօնում խաղացող Կրապիվնիցկու մալօրօսների խմբի ներկայացումներին յաճախում է մեծ մասամբ մալօրօսական և ռուս հասարակութիւնը։ Ներկայացումները բաւական աջող են և զուարճութիւն են պատճառում յաճախող հասարակութեանը։

—

Պետերբուրգում, կառավարչական բարձր շրջաններում խօսվում է մի նոր առանձին մինիստրութիւն հաստատելու մասին,—այն է երկրագործութեան մինիստրութիւն։

—

Թիֆլիսի քաղաքային դումայի սեպտեմբերի 17-ի նիստում, ի միջի այլոց ձայնաւորներից մէկը, իշխան Միքելաձէ, հարց յարուցեց Թիֆլիսի ձիաքաշի բանւորների ծանր դրութեան մասին և առաջարկեց պահանջել ձիաքաշի վարչութիւնից, որ նա քչացնի այդ բանւորների աշխատանքի ժամերի Թիւը։ Ձայնաւորը յայտնեց, որ միջին Թւով այդ բանւորները բանում են օրը 18 ժամ։ Այդ հարցի առիԹով խօսակցութիւններ եղան, սակայն քաղաքագլուխը մի քանի անգամ յայտարարեց, որ այդ հարցի մասին, ըստ էութեան, խօսել Թոյլ տալ չէ կարող, և վերջումն էլ նոյն իսկ բոլորովին հանեց հարցը հերթական խնդիրների միջից։

—

Այս օրերս մեր խմբագրութեան մէջ ստացվեց Պետերբուրգում տպագրված մի գիրք. դա ոտանաւորների մի ժողովածու է, «Բանաստեղծութիւններ» վերնագրով, հեղինակութիւն պ. Լևոնեանցի։

—

«Իվէրիա» լրագրի մէջ կարդում ենք հետևեալը. «Այս օրերս Թիֆլիսի երկաթուղու կայարանի կասսային մօտեցաւ մի լաւ հագնված կին և տոմսակ ուզեց գնել մինչև Գօրի գնալու համար։ Կասսիրը տոմսակ տուեց այդ կնոջը, և առաւ նրա ձեռքից երեք-րուբլիանոց Թղթադրամը, որ շատ դժգոյն էր։ Կասսիրը չընդունեց այդ փողը և ցոյց տուեց ժանդարմին։ Վերջինս տնտղեց այդ երեք-րուբլիանոց Թղթադրամը և ասեց, որ կեղծ է։ Ժանդարմները իսկոյն կալանաւորեցին կնոջը և խուզարկեցին նրա գրպանները, բայց այդ մի երեք-րուբլիանոցից աւելի ոչինչ չը գտան։ Այդ կինը հայ է և սեփական տներ էլ ունի Թիֆլիսում, Եկատերինէ Մարտիրոսեան Պ. ազգանունով։ Ժանդարմները այդ օրն և եթ այդ կնոջն ուղարկեցին ոստիկանատուն և երեկոյեան արձակեցին, որովհետև չէր յիշում Թէ որտեղ էին տուել նրան այդ կեղծ Թղթադրամը։ Այդ գործի առիԹով դատաստանական քննութիւն է կատարվում։ Բացի կեղծ երեք-րուբլիանոցներից վերջին օրերս շատ կեղծ քսան կոպէկանոցներ և հինգ կոպէկանոցներ են տարածվել։

—

Պետերբուրգի «Гражданинъ» լրագիրը, իբրև լուր, հաղորդում է, որ Պետրօվսկայա ակադեմիայի շինութեան մէջ, այդ ակադեմիայի փակվելուց յետոյ, կը զետեղվի Եկատերինեան ինստիտուտը»։

—

Տեղական լրագիրները հաղորդում են հետևեալը. «Այս ամսի 18-ին Թաղեցին մի յղի կին, որը ծնելու համար գնացել էր մանկաբարձական դպրոցը և այնտեղ սխալմամբ լուծողական ձէթի փոխարէն խմեցրել էին կարբօլեան Թթու։ Դրա պատճառով ծննդկանը մի քանի ժամանակից յետոյ վախճանվեց։ Այդ գործի առիԹով դատաստանական քննութիւն է կատարվում»։

—

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի Այգեգործական դպրոցի տեսուչը ուղարկված է Չերնօմորեան շրջանը՝ այնտեղ այգեգործական-գինեգործական դպրոց հիմնելու համար։

—

Սեպտեմբերի 17-ին Կովկասեան Գիւղատնտեսական ընկերութեան նիստում քննվեց Երևանի նահանգում գինեգործական դպրոց բանալու հարցը։ Ցանկալի է, որ վաղուց յարուցված այդ հարցը վերջնականապէս վճռվի, քանի որ Երևանի նահանգը մեծ կարօտութիւն ունի գինեգործական օրինաւոր դպրոցների։

—

Արդէն սկսել են բազմաթիւ եկւորներ երևալ Թիֆլիսում, որոնք զանազան կողմերից գալով Էջմիածին են գնում, սեպտեմբերի 30-ին մեռոնօրհնութեան հանդիսին ներկայ լինելու համար։

—

Ի նկատի ունենալով, որ սեպտեմբերի 30-ին Էջմիածնում բաւական մեծ բազմութիւն պիտի հաւաքվի, ցանկալի է, որ Էջմիածնի հոգևոր իշխանութիւնը պատրաստութիւններ տեսնէր բազմաթիւ եկւոր հիւրերին ամեն տեսակ յարմարութիւններ տալու, մանաւանդ բնակարանի կողմից։ Լաւ հիւրասիրութիւնը միայն կարող է զանազան ծայրերից եկած հայերի սրտի մէջ համակրական զգացմունքներ ներշնչել դէպի Էջմիածնի անունը։

—

ՆԵՐՔԻՆ-ԱԽՏԱՅԻՑ մեզ գրում են. «Այստեղ յայտնվել է մի Թուրք մօլլա, որը իր կախարդական միջոցներով խաբում-կեղեքում է աղքատ գիւղացիներին։ Նա պայմանաւորվում է՝ անզաւակ գիւղացիներին իր գրերի միջոցով որդիք շնորհել, կոյրերի աչքերը բժշկել և անդամալոյծներին ու դիւահարներին բոլորովին առողջացնել և այլն։ Որքան իմացանք, մի որդի չունեցող կնոջից՝ զաւակ ունենալու նպատակով՝ Թուղթ գրելու համար այդ Թուրքը 30 րուբլի էր ուզում։ Մեր աչքերով տեսանք, Թէ ինչպէս այդ կախարդը մի աչքը կոյր մարդու համար նետ էր գնում և գուշակութիւններ անում և այլ պատուէրներ տալիս։ Դրա համար խաբեբան քիչ փող կորզեց—մի րուբլի միայն։ Այստեղ ո՞վ է մեղաւոր արդեօք՝ կոյրը Թէ կախարդը.—ի հարկէ կոյրը. մի կոյր, որի աչքը հարիւր անգամ դեղել են գիւղական հաքիմները և կախարդ Թուրքերը և այդպիսի շատ կոյրեր, երևակայեցէք, վազում են կախարդների մօտ, ծունկ չոքում նրանց առաջ, կուրօրէն հաւատում են նրանց նետ գնելուն ու անիմաստ գուշակութիւններին և նրանց խաբեբայական խօսք ու գրոցները հալած իւղի տեղ ընդունում, ձգելով նրանց գրպանը իրանց ճակատի քրտինքի վաստակը։ Յիշեալ Թուրք կախարդը անդադար Թափառում է մի գիւղից դէպի միւսը Դարաչիչագի գաւառակում։ Լաւ կը լինէր, եթէ գիւղական տանուտէրները ուշադրութիւն դարձնէին այն գեղծումների վրա, որոնք տեղի են ունենում այդ կախարդի ձեռքով»։

—

ԳԵՕՐԻՍԻՑ մեզ գրում են. «Յայտնի աւազակապետ Լեափիփ Խալիլ-օղլին, որին սրանից մի ամիս առաջ Գանձակի նահանգական դատարանը դատապարտել էր 13 տարվայ և չորս ամսվայ տաժանակիր աշխատանքի, ամսիս 13-ին այստեղի բանտից երեք կոզակների ուղեկցութեամբ Շուշի գնալիս ճանապարհին «Լիսագոր» կայարանից 10 վերստ հեռաւորութեան վրա փախչում է շղթաները ոտներին։ Երբ այդ լուրը հասաւ տեղիս գաւառ

---

Թայիրեանի գործարանում, բացի կարմիր և սպիտակ գինուց, պատրաստվում են՝ ռոմ, կոնիակ և այլն։

Անցնելով քաղաքային ազգաբնակութեան կեանքին, Թոյլ կը տամ ինձ մի ակնարկ անել քաղաքիս բնակիչների երկու ցեղերի՝ հայերի և Թուրքերի փոխադարձ յարաբերութիւնների և նրանցից իւրաքանչիւրի յատկանիշների վրա։

Թուրք ազգաբնակութիւնը այստեղ, մեծ մասամբ մնացել է տգէտ, աղքատ, անշարժ, քարացած իր ֆանատիկոս անշարժութեան ու կեղտոտ կենցաղավարութեան մէջ։ Ոչ դպրոց, ոչ լրագրութիւն, ոչ նոր ժամանակակից գաղափար, ոչ հարստանալու նոր, ժամանակակից արդիւնաշահութեան միջոցներ,—մատչելի չեն մինչև այժմ Թուրք ազգաբնակութեան։ Թուրքերի մէջ եթէ շատ հարուստ մարդիկ էլ կան քաղաքումս, բայց նրանք չեն դիմում ժամանակակից որ և է արդիւնաբերութեան միջոցին իրանց հարստութեանը համնելու համար, այլ նրանց հարստանալու միջոցները՝ կամ Պարսկաստանի հետ առևտուրն է, կամ վաշխառութիւնը։ Քաղաքիս ամենահարուստ, խաների ներկայացուցիչները չեն խորշում փողերը տոկոսով տալուց և այն էլ 40, նոյն իսկ 50 և 60 տոկոսով։ Հայերի մէջ էլ կան վաշխառուներ, բայց հայերից շատերը սկսել են պարապել Թէ մանր և Թէ խոշոր արդիւնաբերութեամբ.... Իսկ Թուրքը շարունակում է, ինչպէս ամեն բանում, հին, նահապետական շաւղով ընԹանալ, հարստանալու միակ միջոցը՝ վաշխառութիւնը համարելով։ Ուշադրութեան արժանի է այն երևոյթը, որ ոչ Թէ միայն քաղաքում, բայց և ամբողջ Երևանեան նահանգում՝ վաշխառուների մեծ մասը Թուրքերն են, և ոչ Թէ հայերը։

Բայց մի կողմից Թուրքերի այդ անշարժութեան մէջ մեղաւոր են և իրանք հայերը։ Հայերը, անտարակոյս, տեղական անդրկովկասեան ազգերի Թւում՝ միակ ազգ են, որոնք անկեղծ կերպով, և համեմատաբար առանց նախապաշարմունքի վերաբերվում են դէպի եւրոպական, համամարդկային քաղաքակրթութիւնը։ Սակայն մինչև այժմ հայերը չիմացան կուլտուրական կերպով ներգործել իրանց դրացի անշարժ ցեղերի վրա, ինչպէս են օրինակի համար՝ Երևանեան Թուրքերը։

Բայց և Երևանի հայերի մէջ մի զարմանալի և ուշադրութեան արժանի բարոյական-տնտեսական, մի խօսքով սօցիալական շարժում է նշմարվում։ Ես ուզում եմ խօսել այն երևոյթի վրա, որ գիւղը հետզհետէ նուաճում է քաղաքը։ Եւ ճշմարիտ, Երևանի հայերի հին տները կարծես քարացել են իրանց անշարժութեան մէջ, իսկ քաղաքումս բոլոր այժմեան գործողները՝ գիւղերից դէպի քաղաք գաղթածներն են. քաղաքային վարչութեան մէջ, պետական ծառայութեան մէջ, արդիւնաբերութեան մէջ, փաստաբանների կոչման մէջ, քահանայութեան և ուսուցչութեան մէջ, մի խօսքով քաղաքիս հասարակական կեանքի բոլոր ճիւղերում տիրապետող տարրը՝ գիւղական գործունեայ տարրն է, որը եկել, գրաւել է և շարունակում է գրաւել քաղաքիս բոլոր գործերն ու պարապմունքները, հետզհետէ յետ մղելով բոլոր պարապմունքներից հին քաղաքացիների աւելի անշարժ տարրը....

Այդ նշանաւոր շարժումը կարելի է համեմատել մի այլ, աւելի ընդարձակ, Թէև նոյնանման շարժման հետ, որը կատարվում գաւառներից դէպի Թիֆլիս։ Ինչպէս մեր երկրի գաւառական քաղաքներում գիւղական տարրը անդադար հոսելով դէպի գաւառական քաղաքը՝ նուաճում է քաղաքը, նուաճում է քաղաքի բոլոր պարապմունքներն ու գործերը, ձեռք է բերում քաղաքում բոլոր կալուածները և հետզհետէ սկսում է քաղաքում առաջնակարգ դեր խաղալ հասարակական կեանքի ամեն ճիւղերում,—այնպէս էլ Անդրկովկասի բոլոր գաւառներից դէպի երկրի մայրաքաղաքը, Թիֆլիսը, հոսող գաւառական կենդանի տարրը՝ հետզհետէ գրաւում է, ձեռք է բերում ամեն բան Թիֆլիսում, նուաճում է ամբողջ Թիֆլիսը....

Այդ սարսափելի, անյաղթելի, գուցէ և փրկարար, քաղաքային հասարակական հին ուժերը գիւղական կենդանի ուժերով անընդհատաբար Թարմացնող բնական շարժման դէմ՝ անզօր է մաքառել մարդկային հասարակութիւնը։ Ինչպէս Երևանը անզօր է մաքառել դէպի քաղաքը անընդհատաբար հոսող գիւղական նուաճող ուժի դէմ, այնպէս էլ Թիֆլիսը անզօր է մաքառել դէպի Անդրկովկասեան մայրաքաղաքը անընդհատաբար հոսող, քաղաքում ամեն բան նուաճող, կլանող, ձեռք գցող՝ երկրի ամեն կողմերից եկող և մեր մայրաքաղաքում զետեղվող գաւառական գործունեայ տարրի դէմ։

Գրիգոր Արծրունի

պետին, նա անմիջապէս ուղարկեց իր օգնականին և դիստանցիոննի նաչալնիկին մի խումբ կոզակներով աւազակին ձերբակալելու համար: Ի՞նչ հետևանք կունենայ, դեռ յայտնի չէ մեզ: Դա այն յայտնի աւազակներիցն է, որ անցեալ տարի իր ընկեր հրոսակապետ Իսկանդարի հետ, իրանց բարբարոսութիւններով, չարագործութիւններով և սպանութիւններովը սարսափ էին ձգել Ղափան մհալի բնակիչների վրա, որոնց նախաձեռնութեամբ կազմված էին և մի քանի խմբեր: Եթէ չը ձերբակալեն աւազակին՝ շատ դժուար կը լինի մեր գիւղացիների դրութիւնը. վտանգը մեծ կը լինի»:

—

Մեզ հետևեալն են գրում ԶԱՆԳԵԶՈՒՐԻՑ. «Մի շաբաթ սրանից առաջ Գեօրիս եկաւ մի հիւանդ, որը սիբիրական վէրք ունէր: Վէրքը ծընօտի վրա էր: Օրից օր ուռուցքը աւելանում էր. գիւղացին Ջիբրայիլի գաւառիցն է: Որովհետև հիւանդը անյոյս էր, ուստի նրան ուղարկեցին իրանց գիւղը: Այդ հիւանդութիւնից պէտք է զգոյշ լինեն գիւղացիք: Թէպէտ հիւանդից առողջին չէ փոխվում, բայց մի և նոյն ժամանակ ճանճերի միջոցով էլ կարելի է վարակել ուրիշներին»:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

—

Երկու դարէ ի վեր Մխիթարեաններն զմեզ կը կրթեն անփոփոխելի ուղղութեամբ. միշտ դասական, միշտ պահպանողական եղած է այդ ուղղութիւն. այժմ դասականութիւն ու պահպանողականութիւն չեն կրնար գոհացնել զմեզ. նոր պէտքեր ունենք, նոր ուղղութեան կարօտ ենք: Լեզու, գրականութիւն, իմաստասիրութիւն ազգային կեանքի, պէտք է ենթարկուին արմատական փոփոխութեան. հետևաբար Մխիթարեաններու, ինչպէս նաև ամէն պահպանողականներու, խնամակալութիւնը մեզ անկարևոր է և անտանելի: Մխիթարեանները պիտի հետևին մեր բարեշրջումին, պիտի ընթանան ռամկավարական հոսանքին հետ: Ով որ չը բարեփոխուիր՝ կը կորսուի. այսպէս վճռած է գիտութիւնը:

Բարեշրջումի հարկն անդիմադրելի եղած է նաև Վենետիկի Մխիթարեաններուն. իրենք ալ կը բարեշրջին, բայց դանդաղաբար. կարելի չէ մէկէն ի մէկ թօթափել երկդարեան գրական լուծը:

Մխիթարեանները սկսած են բոլորովին աշխարհաբարեան ըլլալ, առաջին ապացոյց իրենց յառաջդիմութեան: Ս. Ղազարու նոր սերունդը չը մտաբերեր այլ ևս գրաբար հրատարակութիւններ ընել: «Բազմավէպ», Մխիթարեաններու գրական պաշտօնական ազդարարը, այժմ խիստ քիչ կը պարունակէ գրաբար բանաստեղծութիւն կամ յօդուած: Եթէ արդի խմբագիրները չարունակեն իրենց պաշտօնը, գրաբար բոլորովին կարտաքսուի «Բազմավէպէն»:

Ս. Ղազարու տպարանէն դեռ պիտի հրատարակուին գրաբար երկու ընդարձակ գրքեր. Հ. Դաւիթ Վ. Նազարէթեանի թարգմանութիւնն Դանտէին, և Հ. Սամուէլ Քանթարեանի թարգմանութիւնն Կլօպշթօքի: Չեմ կարծեր որ ալ այնուհետև Մխիթարեան երիտասարդ վարդապետ մը Գրաբար թարգմանութիւններ հրատարակէ:

Արդէն վարդապետ մը ձեռնարկած է աշխարհաբարով թարգմանել Թասոյի «Երուսաղէմ ազատեալ» դիւցազներգութիւնը:

Մխիթարեանք պիտի ըլլան ջերմ աշխարհաբարեան. գրագէտի անձնասիրութիւնը և լեզուական իմաստասիրութիւնը կը մղեն զիրենք այդ յառաջդիմութեան:

Այսուհետև ով որ գրաբարի կը նուիրէ իր կեանքը ոչնչութեան նուիրած կըլլայ զայն: Աշխատիլ երեսուն քառասուն տարի, յետոյ հրատարակել գրքեր զոր ոչ ոք պիտի կարդայ, շատ հրապուրիչ ձեռնարկ մը չէ:

—Այո՛, կըսէի խօսակցութեան միջոցին, եթէ շարունակէք հրատարակել գրաբար գրքեր, այդ գրքերը կը կարդացուին ձեր վանքին մէջ մի քանի վարդապետներէ, մէյմէկ օրինակ ալ դուցէ գնեն Վիէննայի Մխիթարեանները. մէյմէկ օրինակ ալ—ապահովաբար—ի Պոլիս կը գնէ Գառնիկ էֆ. Ֆընտըգլեան: Ահաւասիկ ձեր հաւատարիմ ընթերցողները: Իսկ անոնցմէ դուրս:

Մեղք է այդ երիտասարդներուն փճացնել իրենց կեանքը հին լեզուի մը համար զոր հասկցող չը կայ. Մխիթարեաններն ըմբռնած են այս ճշմարտութիւնը:

Սակայն սխալ ըմբռնում մը ունին. կը կարծեն թէ աշխարհաբարը զարգացնելու միակ միջոցը գրաբարի օժանդակութիւնն է. արդ՝ գրաբարը ոչ միայն չը նպաստեր աշխարհաբարի կատարելագործութեան, այլ և մեծ արգելք եղած է աշխարհաբարի կանոնաւորութեան: Ու այժմ աշխարհաբար գրող Մխիթարեանները գրաբարի հետևութեամբ կը գրեն, բայց տարակոյս չը կայ թէ մի քանի տարի յետոյ պիտի հրաժարին նաև լեզուագիտական այդ սխալ վարդապետութենէն:

Վենետիկի Մխիթարեաններն ունին իրենց մէջ երեք աշխարհաբար գրողներ, որոց լեզուն բաւական կը մօտենայ այն աշխարհաբարին որ ներկային, և մանաւանդ ապագային, աշխարհաբարն է: Հ. Ալիշանի «Յուշիկներն», և Հ. Գարեգին Զարբհանելեանի Հայ Դպրութեան մատենագրութեան առաջին տպագրութիւնը և Հ. Խաչերեանցի մի քանի գրութիւնները կրնան աշխարհաբարի օրինակներ ըլլալ Վենետիկի վանքին: Անգամ մը որ այդ օրինակներուն հետևին, այնուհետև աւելի կը յառաջադիմեն:

Երբ Մխիթարեանները կըմբռնեն պէտքն նոր լեզուի մը, բնականաբար կը խորհին թէ նոր լեզուին նոր գրականութիւն պէտք է. կամ աւելի ճիշդն՝ որովհետև նոր գրականութեան պէտք կայ՝ անոր համար ալ նոր լեզուի պէտք կայ:

Այլ ևս կարօտ չենք դասական հին հեղինակներու թարգմանութեան, նորերուն ալ մեծ պէտք չունինք: Ով որ միտք ու սիրտ ունի, ով որ կը զգայ ու կը խորհի ինչո՞ւ թարգմանիչ ըլլայ, ինչո՞ւ ինքզինք նուիրէ ուրիշներու միտքն ուրիշներու բացատրելու պաշտօնին:

Խորհիլ ու ստեղծել, ահա երազն որ կը խռովէ Մխիթարեան նոր վարդապետները: Կերազեն, և երազն արդէն սկսած են իրականութիւն ընել, քննադատական պատմութիւն գրել, փիլիսոփայօրէն և բանաստեղծօրէն ուսումնասիրել մեր հին ու նոր մատենագրութիւնն և.... վիպասան ըլլալ:

Այո՛, վիպասան ըլլալու երազն ունին: Առանց վէպի մատենագրութիւն չը կայ, զի առանց կեանքի մատենագրութիւն չը կայ. վէպը կեանքի ցոլացումն է, ժողովուրդ մը որ կեանք ունի, վէպ ունի:

Ուրեմն Մխիթարեանները կըմբռնեն թէ՝ իբր գրական ու «քարոյական» միաբանութիւն ապրելու միակ պայմանն է կենակից ըլլալ ազգին գրական կեանքին: Ապրելու հարկը զիրենք կը մղէ յառաջադիմելու. մենք ալ իրենց նպաստենք, իրենց օժանդակենք գրական ուղիղ ճանապարհին մէջ ընթանալու և յառաջանալու:

Արփիար Արփիարեան

## ԼՈՒՐԵՐ Կ. ՊՈԼՍԻՑ

—

Կ. Պոլսի լրագիրներում կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները.

«Հայոց և յունաց Պատրիարքարաններու խնդրանաց վրայ, առանձնաշնորհմանց խնդիրները քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովն, որ կայս. հրամանաւ կազմուած է ընդ նախագահութեամբ Դատական և Կրօնական գործոց Նախարար Վ. սեմ. Րիզա փաշայի, երէկ իւր առաջին նիստը կազմեց Դատական պաշտօնատան մէջ և մինչև իրիկուն զբաղեցաւ երկու Պատրիարքներու կողմէ ներկայացեալ պաշտօնագրոց քննութեամբ:

«Սոյն յանձնաժողովոյ անդամ կարգուած են նաև Դատական Նախարարութեան մէքթուպճի Շէվքէթ պէյ և առևտրական առաջին դատարանին նախագահ Իզզէթ պէյ»:

«Մօնիդէօռ» հետևեալ տեղեկութիւններն է հաղորդում.

«Հայոց և Յունաց Պատրիարքարաններու խնդիրները քննելու պաշտօն ունեցող յանձնաժողովոյ առաջին նստին մէջ, որ գումարեցաւ նախընթաց օր, նախագահ Դատական Նախարար Վ. սեմ. Րիզա փաշա յայտարարեց թէ Յունաց Պատրիարքարանին կողմէ ներկայացեալ գրութիւնք օրինական ձևով ներկայացուած չեն և թէ ինչ ինչ ձևակերպութիւնք թերի թողուած են: Յանձնաժողովոյ անդամք առաջարկեցին խնդրոյն քննութեան մտնել, որովհետև այդ կէտն այնչափ կարևորութիւն չունի: Հետևաբար գրութեանց ներկայացման եղանակի մասին յարուցեալ խնդիրը մէկ կողմ թողուեցաւ և կամ այսօրուան նստին մէջ մէկ կողմ պիտի թողուի: Այսու հանդերձ, յանձնաժողովը ձեռնարկեց Յունաց Պատրիարքարանի առանձնաշնորհմանց խնդրոյն: Յանձնաժողովոյ անդամք համակարծիք գտնուեցան Յունաց Պատրիարքարանի առանձնաշնորհմանց խնդրոյն երկու կէտերուն վրայ, իսկ միւս խնդրոց քննութիւնը թողուեցաւ այս օրուան նստին: Յանձնաժողովոյ անդամք երկար խորհրդակցութիւններ ու վիճաբանութիւններ կատարեցին ճշդելու համար Պատրիարքարանի առանձնաշնորհմանց ու իրաւասութեանց մասին ի վաղուց անտի տրուած պաշտօնագրոց տառն ու իմաստն, որ իրարմէ տարբեր կերպիւ մեկնուելու հանգամանքն ունի: Յունաց Պատրիարքարանի խնդրոյն քննութիւնն առայժմ այտեղ ձգուելով Հայոց Պատրիարքարանի առանձնաշնորհմանց խնդրոյն քննութեան ձեռնարկուած և գրեթէ կէսը քննուած է:

Եկեղեցական գործոց համար կազմեալ յանձնաժողովն հինգշաբթի օրը երկրորդ անգամ ըլլալով ի նիստ գումարեցաւ Դատական պաշտօնատան մէջ: Յանձնաժողովն իւր այդ նստին մէջ կրցաւ աւարտել Հայոց Պատրիարքարանի կողմէ գրաւորապէս ներկայացեալ տասը խնդրոց քննութիւնը: Զորեքշաբթի աւուր թուով ըսինք արդէն թէ յանձնաժողովն իւր առաջին նստին մէջ ուսումնասիրած էր այս խնդրոց մեծ մասը, քննելէ և լուսաբանելէ յետոյ Յունաց Պատրիարքարանի ներկայացուցած խնդիրները,—բացի երկուքէ: Հինգշաբթի աւուր նստին մէջ Յանձնաժողովը չը կրցաւ զբաղիլ Յունաց խնդիրներովը, վասն զի Յանձնաժողովն իւր բոլոր ժամանակը նուիրեց Հայոց Պատրիարքարանին կողմէ ներկայացեալ խնդրոց լուծման:

Յանձնաժողովը շաբաթ օրն ևս ի նիստ գումարեցաւ Դատական պաշտօնատան մէջ ընդ նախագահութեամբ Րիզա փաշայի: «Սապահ» կըսէ թէ Յանձնաժողովն իւր նոյն նստին մէջ նկատողութեան առնելով Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարք Հօր վերջին պաշտօնագիրն, ինչպէս նաև Եկեղեցական համագումար Ժողովոյ տեղեկագիրն, այդ առթիւ խորհրդակցութիւններ կատարած է»:

«Արևելք» լրագիրը հաղորդում է, սեպտեմբերի 3-ից:

«Ինչպէս շաբաթ աւուր թուով ծանուցինք, Պատրիարքարանի գործակատար Ֆրէնկեան Աբրահամ էֆէնդի նոյն օրը Դատական և Կրօնական գործոց նախարար Րիզա փաշայի յանձնեց Խորէն Պատրիարք Հօր հրաժարականն և բերանացի բացատրութիւններ ևս տուաւ»:

«Երէկ, Խորէն Ս. Պատրիարք Հայրն իւր գրենքն ու գոյքերը Պատրիարքարանէն փոխադրել տուաւ ի Մաքրիգիւղ իւր բնակարանը»:

## ԹԻՖԼԻՍ

—

Ֆրանսիական «Liberté» լրագիրը գրում է հետևեալը. «Գեներալ Զէքի-փաշա, չորրորդ զօրաբաժնի հրամանատարը, որ ճանապարհորդել է Մուշի կողմերում, ասում է, որ հայերի գլխաւոր գանգատը կայանում է նրանում, որ քիւրդերը գողանում են նրանց տնային անասունները: Զէքի-փաշան յայտնել է քիւրդերին, թէ սուլթանը ցանկանում է, որ քիւրդերը դադարեն աւազակութիւններ անելուց: Իբրև ապացոյց այդ բանի, Զէքի-փաշան մի քանի գունդ զօրք է թողել Մուշի կողմերում՝ քիւրդերի յարձակումների առաջն առնելու համար»:

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—Թիւրքաց զօրքերը Էրզրումում, ինչպէս հաղորդում են անգլիական լրագիրները, շատացված են:

—«Figaro» լրագրի Վիէննայի թղթակիցը հաղորդում է, որ իբր թէ Չեռնոգորիայի Նիկոլայոս իշխանը կռւել է իր փեսայ իշխան Պետրոս Կարագեօրգիևիչի հետ, որովհետև վերջինս կամենում է սերբիական գահի թեկնածու լինել: Այդպիսի վարմունքը համապատասխան չէ ոչ Ռուսաստանի քաղաքականութեանը և ոչ չեռնոգորիական կառավարութեան ցանկութիւններին: Այս պատճառով իշխան Կարագեօրգիեվիչ վճռել է հեռանալ Չեռնոգորիայից:

—Նիցցայից լրագիրներին հեռագրում են սեպտեմբերի 11-ից հետևեալը. «Մեծ անձրևների պատճառով ամբողջ Րիվիէրան հեղեղված է: Շատ կամուրջներ քանդվեցան և երկաթուղու երթևեկութիւնը դադարած է:

—«Հավասի գործակալութեանը» Պարիզից հեռագրում են սեպտեմբերի 10-ից հետևեալը. «Հակագերիվաճառութեան կօնգրէսը բանալու ժամանակ Կէլլէր ողջունեց օտար պատգամաւորներին, մանաւանդ անգլիական պատգամաւորին, որպէս մեծ ազգի ներկայացուցչին, որ այնքան շատ նըպաստել է քաղաքակրթութեանը: Նախագահ Կէլլէր ապա ասեց թէ մահմեդական կրօնը անընդունակ է քաղաքակրթել Աֆրիկան և որ քրիստոնեայ միսիօնարները միայն կարող են սևամորթներին դէպի նոր կեանք հրաւիրել: Մի և նոյն ժամանակ Կէլլէր թախանձանքով խնդրում էր կօնգրէսի անդամներից ամեն ջանք թափել աշխարհիս երեսից ստրկութիւնը ջնջելու համար»:

—Վիէննայից սեպտեմբերի 11-ից հեռագրում են հետևեալը. «Այսօր հասաւ այստեղ Կ. Պոլսի ռուսաց դեսպան Նէլիդով»:

—Բոմբէյից Լօնդօնի լրագիրներին հաղորդում են, որ նոր սահմանաչափութեան պատճառով այնտեղ փոքրիկ ապստամբութիւն եղաւ: Նաբաբը դիմեց բրիտանական զօրքերի օգնութեանը: Զինուորված խմբերի հետ կռւի ժամանակ 13 տեղացիներ սպանվեցան և 40 հոգի էլ վիրաւորվեցան:

—Այս տարի մեծ հանդիսով կատարվեց իտալական զօրքերի Հռոմ մտնելու տարեդարձը: Երբ հանդիսաւոր գնացքը, որին մասնակցում էին բոլոր իշխանութիւնները, ծեր զինւորները և բազմաթիւ ընկերութիւններ իրանց նշաններով և երաժշտութեամբ զետեղվեցին Հռոմի պատերի մէջ գոյացած պատմական ճեղքի մօտ, Հռոմի քաղաքային վարչութեան ժամանակաւոր կառավարիչ կօմիսարը մի կրակոտ ճառ արտասանեց, որ ջերմ ծափահարութիւններով ծածկվեցաւ: Երկրորդ հռետորն էր Մէնօտտի Գարիբալդի: Իր ճառի մէջ նա յիշեց այն հերոսներին, որոնք մեռան Իտալիայի ազատութեան և միութեան կռւի մէջ, մի և նոյն ժամանակ յիշեց և Օբերդանկին: Այդ անունը առիթ տուեց «Կեցցէ Տրիէնտ և Տրիէստ» ոգևորված բացականչութիւններին:

# „ՄՇԱԿԻ“ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

## ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՏԱՇԿԵՆՏ, 17 սեպտեմբերի: Երէկ տեղի ունեցաւ ճաշ ի պատիւ ֆինանսների մինիստրի, որը մի ճառի մէջ արտայայտեց Տուրկեստանը այցելելուց դուրս բերած այն համոզմունքը, թէ ռուսաց քաղաքացիութիւնը արտասովոր արագութեամբ աճում և արմատ է գցում Միջին-Ասիայում:

ՍԻՄԲԻՐՍԿ, 17 սեպտեմբերի: Երէկ այստեղի հոգևոր սեմինարիան տօնեց իր գոյութեան յիսնամեակը: Սիմբիրսկի եպիսկոպոսը նուիրեց 1,000 րուբլի, որի տոկոսը կը տրվի ամենաաղքատ ուսանողին՝ ուսումն աւարտելիս:

ԽԱԲԱՐՕՎԿԱ, 17 սեպտեմբերի: Վլադիվօստօկում եղած խօլերան վերջացաւ: Ամուրեան շրջանում հունձը շատ լաւ էր: Հեղեղը ոչնչացրեց շատ հացահատիկներ, խոտ և շինութիւններ. մի քանի մարդիկ զոհ գնացին:

ԲԷԼԳՐԱԴ, 17 սեպտեմբերի: Սկուպշչինայի համար ընտրված են՝ 113 արմատականներ, 17 ազատամիտներ, 3 նապրեդնիակներ: Երկու կրկնաքուէարկութիւն պիտի լինի:

ՊԱՐԻԶ, 17 սեպտեմբերի: Բէլգրադից ստացած տեղեկութիւններին նայելով, նախկին Միլան թագաւորի և նրա որդու կեանքի դէմ փորձ եղաւ՝ երբ նրանք կառքով զբօսնում էին: Կառքի վրա գցվեց պատրօն, որը թէև պայթվեց, բայց և այնպէս ոչոքի չը վիրաւորեց:

ՏԱՇԿԵՆՏ, 18 սեպտեմբերի: Այստեղի վաճառականները հաւաքեցին 6,000 րուբլի, պահելու համար մինիստր Վիշնեգրադսկու անունով թոշակաւոր, ուսում տալու այն ռուս վաճառականների որդոց, որոնք մասնակցել են Միջին-Ասիայում ունեցած առաջին ձեռնարկութիւններից:

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՕՐՈԴ, 18 սեպտեմբերի: Անձրևների պատճառով ամեն տեղ ջուրը բարձրացաւ:

ԲԵՐԼԻՆ, 18 սեպտեմբերի: Վիլհելմ կայսրը ուղևորվեց Վիէննա:

ՎԻԵՆՆԱ, 18 սեպտեմբերի: Այսօր այստեղ վախճանվեց ռուս պրօֆէսօր Անատոլի Գրուբէր:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 սեպտեմբերի: «Новое Время» լրագիրը հաղորդում է, որ բանակցութիւնների համար այս օրերս Պետերբուրգ եկած չինական դեսպան Խօա-Ջուն պատկանում է չինական այն նոր քաղաքականութեան կողմնակիցների բանակին, որի նպատակն է վերադարձնել Ռուսաստանի հետ միացրած Լիի երկրի մի մասը։—«Journal de St. Pétersbourg» հաղորդում է ճիշդ աղբիւրից, որ սերբիական Ալէքսանդր թագաւորի կեանքի դէմ փորձ անելու լուրի տարածման պատճառն այն էր, որ թագաւորի կառքն անցաւ փողոցի վրա ընկած բէվօլվէրի պատրօնի վրա, որը և ճայթեց։

—

### Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱ.

Սեպտեմբերի 18-ին

| | | |
|---|---|---|
| Լոնդոնի վրա 10 ֆունտ արժէ. . . | 78 ր. | 75 կ. |
| Բերլինի վրա 100 մարկ — . . . | 38 » | 60 » |
| Փարիզի վրա 100 ֆրանկ — . . . | 31 » | 20 » |
| Ոսկի — — արժէ . . | 6 » | 33 » |
| Մաքսային կուպօններ — . . . | 126 » | 50 » |
| Արծաթ — — — . . . | 1 | 13 » |
| Բօրսային դիսկօնտներ — . . . | 5 և | 6½%» |
| Պետ. բանկի 5% տոմս 1-ին շրջանի. | 101 » | — » |
| — — — — 2-րդ — | 100 » | 25 » |
| — — — — 3-րդ — | 100 » | 25 » |
| — — — — 4-րդ — | 100 » | 25 » |
| — — — — 5-րդ — | 100 » | 25 » |
| — — — — 6-րդ — | 100 » | 25 » |
| 6% ոսկեայ փոխառութիւն . . . . | 140 » | 50 » |
| 4% ոսկեայ րէնտա . . . . . . . . | — » | — » |
| Արևելեան 5% փոխառ. 1-ին շրջ. | 102 » | — » |
| — — — 2-րդ — | 102 » | — » |
| — — — 3-րդ — | 103 » | — » |
| Ներքին 5% առաջին փոխառութ. | 226 » | 50 » |
| — — երկրորդ — | 212 » | — » |
| — — երրորդ ազն. կալ. բ. | 211 » | — » |
| Պետական. երկաթուղային րէնտա . | 101 » | 25 » |
| 5½% րէնտա . . . . . . . . . . . | 103 » | 50 » |
| 5% ներքին փոխառութիւն . . . . | 87 » | 25 » |
| 5% գրաւ. թղթ. ազն. կալ. բանկի | 100 » | 12 » |
| 4% վկայակ. գիւղ. հող. բանկի. . | 103 » | 62 » |
| 4½% գրաւական թղթեր կալուած. փոխ. կրեդիտ. ընկեր. մետալ. . | — » | — » |
| — — — թղթադ. | 97 » | 75 » |
| Պետերբուրգի քաղաքային կրեդիտ. ընկերութեան օբլիգացիները. . | 96 » | 87 » |
| Մոսկվայի քաղաք. օբլիգացիաներ. | 95 » | 50 » |
| Օդէսայի — — . | 95 » | 62 » |
| Թիֆլիսի — — . | — » | — » |
| Գրաւ. թղթ. Թիֆլիսի կալ. բանկի. | — » | — » |
| — — Քութայիսի — — . | — » | — » |

Ս. Պետերբուրգի բորսայի տրամադրութիւնը ամուր է։

---

Ժամանակաւոր խմբագիր Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆՑ

Հրատարակիչ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

---

# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

### ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Մօտ 10 տարի լինելով **ՕԴԵՍՍԱՅՈՒՄ**, և կատարելով կօմիսիական գործեր, հրապարակաւ յայտնում ենք կովկասեան և Անդրկովկասեան պատուելի հասարակութեանը, որ դարձեալ եղբարք ԱԲԳԱՐԵԱՆՑՆԵՐՍ սովորականի համեմատ ընդունում ենք յանձնարարական պայմանով զանազան ապրանքներ վաճառելու։

Նաև կատարում ենք ապրանքներ գնելու, ծախելու և ուղարկելու պատուէրներ։

Ցանկացողները պայմանների մասին կարող են դիմել ինձ. ОДЕССА Никиту Апкарову„. 9—10

---

### ՄԻ ՕՐԻՈՐԴ

որ աւարտել է իգական գիմնազիան, պատրաստում է աշակերտներ և աշակերտուհիներ գիմնազիաների ստորին դասարանների համար։ Համաձայն է և կրկնողութիւններ անել։ Կարող է պարապել նոյնպէս և հայերէնից փոքրերի հետ։ Հասցէն կարելի է իմանալ Տէր Յովսէփեանի ծխախոտի խանութում, „Кавказъ“ հիւրանոցի տակ։

5—5

---

ԳԻՄՆԱԶԻԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԿԱՅԱԿԱՆՈՎ մի պարոնի ընտանիքում ընդունվում են գիշերօթիկ աշակերտներ։ Նոյն տեղը կարող են անել և ԿՐԿՆՈՒԹԻՒՆՆԵՐ։ Հասցէն կարելի է իմանալ Ծատուրեանի խանութում, Դվօրցօվայա փողոցի վրա։ 5—5

---

ՄԻ ՕՐԻՈՐԴ որ աւարտել է գիմնազիան և Գայիանեան ուսումնարանի 6 դասատուն, մոտչելի գներով պատրաստում է աշակերտներ և կրկնութիւններ է անում ամեն առարկաներից. Հասցէն. Мѣщанская улица, № 15 домъ Придонова. 5—5

---

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Տիգրան Նաւասարդեանի ժողոված

### „ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻԱԹՆԵՐԻ“

վեցերորդ գիրքը։ Գինն է 50 կոպէկ։ Հասցէն. Тифлисъ. Тиграну Навасардьянъ (Типографія Ротинянцъ). 2—3

---

Բօրժօմից վերադարձած նախկին պալատական վարժուհի Վ. ԴՈՒՆԻՆ-ԲԱՐԿՕՎՍԿԱՅԱ սովորեցնում է մինչև 40 ՊԱՐԵՐ և մասնաւորապէս մազուրկա. Հասցէն՝ Լաբօրատօրնայա փողոց, 1 մաս № 57. 2—6

---

Տպագրվում է և հոկտեմբերի վերջին լոյս կը տեսնի Մոսկվայում

### „ՍՈԽԱԿ“

ազգային լիակատար երգարանի առաջին հատորը։

Այս հատորի մէջ, բացի բոլոր գործածական երգերից, տպագրվելու են և նոր երգեր, և բանաստեղծութիւններ, և, երգերին վերաբերեալ, քանի մի արձակ գրուածքներ, թւով մօտ 300։ Չը նայելով գրքի մեծութեանը, իւրաքանչիւր օրինակի գինը նշանակում ենք, կանխիկ վճարող բաժանորդների համար, մի րուբլի։ Օտարաքաղաքացիք թող բարեհաճեն, որքան կարելի է, վաղօրօք դիմել Բագու, „Սոխակի“ հրատարակիչ Գրիգոր քահ. Գրիգորեանցին՝ հասցէովս, Священнику Григорію Григоріанцъ, *Баку*.

3—3

---


ВѢРНАЯ СМЕРТЬ.

### „ՄԻՇՈՒՆԱՅ“

ՄԿՆԵՐ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՌԻՍ ԳՈՒՏՄԱՆԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

գլխաւոր պահեստը գտնվում է Թիֆլիսում և Բագւում, Բարձրագոյն հաստատված դեղատան ապրանքների վաճառման կովկասեան ընկերութեան մօտ։ 5—50 (հ)

---

### ՄԻ ԸՆՏԱՆԻՔ

ընդունում է գիշերօթիկներ՝ թէ աշակերտներ և թէ աշակերտուհիներ. Նոյն տեղը և կրկնողութիւններ են անում։ Հասցէն կարելի է իմանալ „Աղբիւրի խմբագրատանը։

### ВЪ БЛАГОРОДНОМЪ

семействѣ принимаютъ на полное содержаніе учащихся въ учебныхъ заведеніяхъ мальчиковъ и дѣвицъ; такъ-же репетируютъ таковыхъ. Спросить адресъ въ редакціи журнала „Агбюръ“. 5—5

---

ԾԽԱԽՈՏԻ ԷԿՍՏՐԱԿՏ

## ՆԻԿՈԼԱՅ ԲՈՂԴԱՆՕՎԻ ԵՒ ԸՆԿ.

ԱՄԵՆԱԼԱՒ ԵՒ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՄԻՋՈՑ ոչխարներին, եղջերաւոր և այլ կենդանիներին բորոտութիւնից և կաշու ուրիշ ամեն տեսակ հիւանդութիւններից բժշկելու, նմանապէս ձիերին, շներին կաշու ամեն տեսակ հիւանդութիւններից և թռչունների պարազիտներից բժշկելու համար։

ՊԱՀՊԱՆՈՒՄ է ամեն տեսակ ծաղիկներ, բոյսեր, ծառեր և բանջարեղէններ՝ որդներից, թրթուրներից և ուրիշ միջատներից։

ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ Թիֆլիսում՝ Դեղագործական Ապրանքների վաճառման ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատված կովկասեան ընկերութեան մէջ։ 11—25 (հ)

---

Հարկաւոր է Նոր-Բայազեդի երկսեռ դպրոցների համար երկու ուսուցիչ կրօնի, հայոց-լեզուի և այլ առարկաների համար։ Ցանկացողները շուտափոյթ դիմեն Նոր-Բայազեդ՝ հոգաբարձութեան։

2—3

---

### ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆԻ ԴԱՀԼԻՃՈՒՄ

Շաբաթ, սեպտեմբերի 22-ին

ԵՐԳԻՉ Բ. ԱՄԻՐՋԱՆԵԱՆ

Տալու է մի կօնցերտ, մասնակցութեամբ տ.տ. Լիվիցկայա-Ամֆիի, Ցարութիւնեանի, օր. Իլլիաշենկօյի, և պ. Տէր-Ասատրեանի։

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Ծատուրօվի լամպաների խանութում, Տէր-Յովսէփեանի ծխախոտի խանութում և Սուղանաձեանի երաժշտական խանութում։

2—3

---

### ՄԻ ՊԱՏՒԱՒՈՐ ԸՆՏԱՆԻՔ

ընդունում է գիշերօթիկ աշակերտուհիներ։ Հասցէն իմանալ „Մշակի“ խմբագրատան

2—5

---



## Մ. Գ. ՑԷՅՏԼԻՆԻ

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԻ

### ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պալատի այգու դիմաց, անկիւնի մագազինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոր ոսկեայ, նիկելեայ, պօղպատեայ և կրիայի ոսկորից ԱԿՆՈՑՆԵՐ, ՊԷՆՍՆԷՆԵՐ և ԼՕՐՆԷՏՆԵՐ։ Թատրօնական և դաշտային ԲԻՆՕԿԼՆԵՐ, ՋԵՐՄԱՉԱՓԵՐ, թէ սենեակների, թէ դուրսը կախելու և թէ վաննաների համար։ Վերաստուգված և վկայական ունեցող ՄԱԿՍԻՄԱԼ ջերմաչափեր։ Լօրնէտի և պէնսնէի համար ոսկեայ, արծաթեայ, նոր-ոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետալական թելեր։



Ակնոցներ և պէնսնէներ տրվում են նմանապէս բժիշկների պատուէրով։

Մագազինում յանձն են առնում նմանապէս փչացած իրերի նորոգելը և ապակիների գնելը։

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են։

33—50 (հ)

---

ՊՐՕՎԻԶՕՐ **Ա. ՇՏԷԽԷՐԻ** ՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՏԱՄՆԵՐԻ ՑԱՒԻ ԵՒ ՓՉԱՆԱԼՈՒ ԴԷՄ

ՊՈԴՕԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԴԵՂ ԿԱԹԻԼՆԵՐ 50 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԿՕԿԱՑԻՆԵԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ԷԼԻԿՍԻՐ 80 ԿՈՊ.

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԱՏԱՄՆԱՅԻՆ ՓՈՇԻ 30 ԿՈՊ.

**ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ.**

ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ Դեղագործական ապրանքների կովկասեան ընկերութեան մէջ և պ. պ. Շահպարոնեանցի, Մակկէրի, Սէնչիկօվսկու և Ագմուրօվի դեղատներում։

ЗУБНЫЯ КАПЛИ: кор. 50 к.
ЗУБНОЙ ПОРОШОКЪ: кор. 30 к.
ЗУБНОЙ ЭЛИКСИРЪ: фл. 80 к.
**А. ШТЕХЕРЪ**

28—52 (Հ.)

---

Ռուսաց լեզուի մի ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻ ցանկանում է որ և է գաւառական հայոց դըպրոցում դասեր ունենալ։

Հասցէն՝ Գայիանեան ուսումնարան։ 4—5

---

# ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԵՐԿՈՒ ՍԵՌԻ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

### ԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առևտրական կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առևտրական կրթութիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հմուտ հաշուապահներ։ Աւարտողները ստանում են ատեստատներ։

Աւանդելի առարկայք սոքա են՝ 1) Առևտրական Տնտեսութիւն, 2) Առևտրական Թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուաբանութիւն համրիչի վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Առևտրական և մուրհակի կանոնադրութիւն և 7) գեղագրութիւն։

Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, ընդունելութիւնները սեպտեմբերի 1-ից, ամենայն օր, երեկոյեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սօլօլակում, Աղէքսանդր Փրիդօնօվի տանը, № 9 Սերգիէվսկայա և Նագօրնայա փողոցների անկիւնում, դեղատան դիմաց։ Ծրագիրը ու կանոնները կարելի է ստանալ ՁՐԻԱՊԷՍ եղբ. Ծովիանօվների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտարաքաղաքացիք դիմում են կուրսերի հիմնողին.—въ Тифлисъ, С. П. Мануэльянцу.

16—18 (Ե. Շ.)

Дозволено цензурою, Тифлисъ 19 Сентября 1890 г. Типографія Канцеляріи Главнонач. Гражд. час. на Кавк., Лорисъ-Меликовск. ул. д. каз.